

ԳՐԱԲԱՐԻ ԱՆՑՅԱԼ ԴԵՐԲԱՅԻ ՁԵՎԱԽՄԱՍՏԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ՊԼԱՏՈՒԹՅԱՆ» ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ*

ՀՏԴ 809.198.1

Մարկոսյան Նարինե

ԵՊՀ Հայոց լեզվի պատմության ամբիոնի ասիստենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
narine.markosyan1977@mail.ru

Սույն հոդվածում փոխգործուն տարբեր մեթոդների կիրառմամբ անդրադառնում ենք գրաբարի անցյալ դերբայի՝ իբրև ձևաբայի և դերբայի քննությանն ու արժևորմանը լեզվի զարգացման հին հայերենի գոյավիճակում: Խնդրո առարկա իրողությունը ուսուցանում ենք հինհայերենյան բնագրային նյութերի հիման վրա: Անցյալ դերբայի համաժամանակյա ուսուցումը կարևոր և անհրաժեշտ է, քանի որ այն ներկայացնում է լեզվի պատմական զարգացման ընթացքում տեղի ունեցող տեղաշարժերը անկախ և կախյալ դերբայների սահմանագծում և ամբողջացնում է հայերենի բայական համակարգում գլխավոր և մասամբ նաև երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի հիմնամասը կազմող կառույցների ձևավորման և զարգացման նկարագրությունը:

Աշխատանքում մեր կողմից առաջարկված երեք դասաժամերի ընթացքում և՛ ավանդական, և՛ նոր մեթոդների կիրառմամբ (գրույց, դասախոսություն, մտազրոհ, հարցադրումներ, խմբային և գործնական աշխատանքներ, գծապատկեր) փորձում ենք բացատրել անցյալ դերբայի կազմության սկզբունքը, ուսուցանել անցյալ դերբայով և օժանդակ բայերով կազմված դիմավոր ժամանակաձևերի կառուցատիպերը, ցույց տալ անցյալ դերբայի ձևախմաստային երկփեղկումը վաղակատար և հարակատար դերբայների, որոնք լեզվական կիրառությունների հստակեցման հետևանքով արդեն տարրորոշված դրսևորումներ ունեցան:

Դասաժամերի ընթացքում ցույց ենք տալու անցյալ դերբայի հետ ենթակայի՝ ուղղական կամ սեռական հոլովով արտահայտվելու առանձնահատկությունը, անդրադառնում ենք նաև անկախաբար գործածված անցյալ դերբայի և՛ բայական, և՛ անվանական գործառնությունների քննությանը:

Բանալի բառեր՝ հին հայերեն, անցյալ դերբայ, կախյալ դերբայ, անկախ դերբայ, ձևաբայ, բայական և անվանական գործառնությունների ուսուցում, փոխգործուն մեթոդներ:

Ներածություն

Հայերենը բայակենտրոն լեզու է, և պատահական չէ, որ բայը հայ լեզվաբանության մեջ ենթարկվել է մանրագնին քննության: Սակայն բայական համակարգին առնչ-

* Հոդվածը ներկայացվել է 13.08.2022:

Տպագրության է երաշխավորել ք.գ.դ., պրոֆեսոր Լ.Մ. Խաչատրյանը: 22.08.2022:

Հոդվածը տպագրության է ընդունվել 2.09.2022:

վող շատ իրողություններ կարիք ունեն նորովի դիտարկվելու, եղած տարակարծություններն արժևորելու և դրանք գիտականորեն հիմնավորելու առումներով:

Անցյալ դերբայը գրաբարում բազմաթիվ է, համապատասխանում է արդի հայերենի վաղակատար և հարակատար դերբայներին, որոնց ձևավորումը միջին հայերենում հիմք հանդիսացավ սահմանական եղանակի նոր բաղադրյալ ժամանակաձևերի հաղացումների ձևավորման համար: Այդ կառույցներն անցան նոր գրական հայերենի երկու տարբերակներին, սակայն տարբեր նկարագրով:

Ուստի գրաբարի անցյալ դերբայի ուսուցումը բանասիրության մեջ կարևոր և անհրաժեշտ է՝ ամբողջացնելու բայական համակարգի կարևորագույն մասը կազմող դերբայների ձևաբանական, շարահյուսական և դրանցից բխող ոճական հատկանիշների քննությունը:

Բովանդակություն

Աշխատանքի բովանդակությունը կազմում են ուսումնասիրության հիմնախնդիրները և հետազոտության բերած գիտական նորույթը:

Հիմնախնդիրները: Մենք կարևորում և արժևորում ենք արդիական մեթոդների կիրառումը ոչ միայն դպրոցում, այլև՝ բուհական համակարգում: Ուսումնական գործընթացը միշտ էլ կարիք ունի նորացման, ուսումնառության ավելի ժամանակակից և առավել արդյունավետ ձևերի և մեթոդների ներդրման:

Մենք ուսուցման համար նախընտրելի ենք համարում խառը տիպի դասեր, ինչպես նաև՝ համագործակցային դասեր՝ ԽԻԿ համակարգով¹:

Ուսուցման ավանդական ձևերի կողքին ներկայացվելու են նոր՝ արդիական ձևեր և մեթոդներ, որոնք, մեր կարծիքով, նպաստելու են ուսուցման գործընթացի խթանմանը:

Կիրառելի մեթոդներն են՝ մտազրոհ, գծագրական հետազոտություն, խմբային հնարներ, դասախոսություն, խմբավորում:

Հետազոտության նորույթը: Վերոբերյալ մեթոդների կիրառմամբ փորձել ենք վերհանել անցյալ դերբայի իմաստային, ձևաբանական, ոճական-շարահյուսական առանձնահատկությունները լեզվի զարգացման հին հայերենի գոյավիճակում:

Ելնելով այն հանգամանքից, որ գրաբարի անցյալ դերբայը իմաստագործական լայն դրսևորումներ ունի՝ մենք առաջարկում ենք այն ուսանողներին մատուցել երեք դասաժամերի ընթացքում՝ նպատակ ունենալով՝

- բացատրել հին հայերենի անցյալ դերբայի կազմությունը, ձևագործաբանական բնութագիրը,

- համաժամանակյա քննությամբ ցույց տալ անցյալ դերբայի ոչ միայն ձևաբանական, շարահյուսական, այլև՝ ոճական հատկանիշները՝ բացահայտելով այն նորմերն ու բացառությունները, որոնք բնորոշ են եղել նրան՝ իբրև ձևաբայի և դերբայի:

Դաս I - Անցյալ ձևաբայի ուսուցումը հին հայերենում,

Դաս II - Անկախաբար գործածված անցյալ դերբայի՝ բայական իմաստով կիրառությունների ուսուցում հին հայերենում,

Դաս III - Անցյալ դերբայի անվանական գործառույթների ուսուցումը հին հայերենում:

Դաս - Անցյալ ձևաբայի ուսուցումը հին հայերենում:

¹ Ուսուցման ժամանակակից մեթոդների, հնարների և վարժությունների մասին տե՛ս 16:

Ղափ նպատակներն են՝

- բացատրել անցյալ դերբայի կազմության սկզբունքները¹,
- անդրադառնալ անցյալ դերբայով և օժանդակ բայերով (են, էի, իցեն, լինիմ, կամ, ունիմ) կազմված ժամանակաձևերի քննությանը²,
- ներկայացնել անցյալ դերբայով վերլուծական ժամանակաձևերի և ենթակայի համաձայնությունը³,
- բնագրային նյութերի հիման վրա ձևավորել անցյալ դերբայով կազմված վերլուծական ժամանակաձևերի ուսումնասիրություն կատարելու հմտություններ:

Կիրառելի մեթոդներն են՝ զրույց, դասախոսություն, մտազրոհ, խմբային հետազոտություն, վարժություններ:

Ղափ ընթացքը ներկայացնում ենք քայլաշարերով:

Քայլ I

Խթանման փուլ

Այս փուլում կիրառում ենք զրույցի մեթոդը, որն առավել հին մեթոդներից է⁴, զրույցի միջոցով դասախոսը կատարում է ուսուցանվող նյութի նախնական ներմուծում՝ հաշվի առնելով լսողների ընկալունակությունը և արդեն ունեցած այն գիտելիքների վերհիշումը, որոնք կապված են հաղորդվող նյութի հետ: Այս փուլում կարելի է ընտրել առանցքային հարցեր, ինչպիսիք են՝ «Թվարկել գրաբարի դերբայները», «Ինչպե՞ս է կազմվում գրաբարի անցյալ դերբայը», «Թվարկել ժամանակակից հայերենի դերբայներն ու ձևաբայերը»:

Քայլ II

Իմաստի ընկալման փուլ, ընտրված մեթոդ՝ դասախոսություն:

Դասախոսությունը տեղեկատվության, նյութի համակարգված ներկայացումն է դասախոսի կողմից: Դասախոսը (10-15 րոպե) կարդում է դասախոսություն «Հին հայերենի անցյալ դերբայի կազմությունը և նրանով կազմված բաղադրյալ ժամանակաձևերի քննությունը» թեմայով:

Դասախոսություն

«Անցյալ դերբայ» տերմինը կիրառվել է գրաբարի քերական Արսեն Բագրատունու կողմից, սակայն նա այս դերբայի՝ որպես բայական հասկացության մասին խոսում է վերապահությամբ և անցյալ դերբայը համարում նաև ածական⁵: Մանրամասն և տարբեր աղբյուրներից ուսանողներին տեղեկություն է տրվում անցյալ դերբայի -եալ վերջավորության առաջացման, ստուգաբանման, կազմության վերաբերյալ: Քննարկվում են Ա. Տոմսոնի, Ք. Պատկանյանի, Ա. Մեյեի, Հ. Աճառյանի և այլոց կարծիքները՝ եալ մասնիկի առաջացման վերաբերյալ¹: Գրատախտակին գրված բնագրային օրինակներ-

¹ Անցյալ դերբայի կազմության մասին տե՛ս հետևյալ աշխատությունները՝ Բագրատունի Ա., 1852, 199: Աբեղյան Մ., 1906, 102: Աբրահամյան Ա., 1953, էջ 61, էջ 167-168: Խաչատրյան Լ., Թոսունյան Գ., 2004, էջ 180-181:

² Աբրահամյան Ա., 1953, 341-345: Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., 1992, 174-175

³ Այտընեան Ա., 1866, էջ 450: Աբրահամյան Ա., 1953, էջ 343: Մալխասյանց Ստ., 1891, էջ 43:

⁴ Յուզբաշյան, Աշխ., 2014, էջ 13:

⁵ Բագրատունի Ա., 1852, էջ 199:

¹ Томсон А., 1890, 254. Патканов К., 1864, 104. Աճառյան Հ., 1940, էջ 31: Ղազարյան Ս., 1961, էջ 379:

րի հիման վրա հստակեցվում և պարզաբանվում են –եալ//եցեալ՝ սիրեալ-սիրեցեալ, գրեալ-գրեցեալ բաղադրիչներով ձևավորվող դերբայների վերաբերյալ այն թյուր և ար-հեստածին պնդումները, թե –**եցեալ**-ով կազմվածները կրավորական են, իսկ առանց –**եց**-ի կազմվածները՝ ներգործական: Այս դերբայի երկու տարբերակների միջև ներգործական և կրավորական սեռերն առանձնացնելը սխալ է¹:

Իբրև ձևաբայ՝ անցյալ դերբայն օժանդակ բայի խոնարհված ձևերի հետ կազմում է երեք բաղադրյալ ժամանակաձևեր՝ 1) **սահմանական եղանակի վաղակատար-հարակատար ներկա (գրեալ եմ)**, գրաբարյան այս ժամանակաձևը համապատասխանում է արդի գրական հայերենի սահմանական եղանակի ներկայի վաղակատարին և ներկայի հարակատարին, 2) **վաղակատար-հարակատար անցյալ (գրեալ էի)**, իմաստային տեսանկյունից այս ձևերը համապատասխանում են արդի հայերենի անցյալի վաղակատար և անցյալի հարակատար ժամանակաձևերին, 3) **ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնի (գրեալ իցեմ)**, որը համարժեք է արդի հայերենի հարակատար դերբայով կազմվող երկրորդական ժամանակաձևերին: Ավելի հասկանալի դառնալու համար գրատախտակին գրում ենք անցյալ դերբայով կազմված բաղադրյալ ժամանակաձևերի հարացույցը.

<i>Սահմ. եղ. վաղ.-հարակ. ներկա (հարակատար)</i>		<i>սահմ. եղ. վաղ.-հարակ անցյալ (գերակատար)</i>	
<i>գրեալ եմ</i>	<i>գրեալ եմք</i>	<i>գրեալ էի</i>	<i>գրեալ էաք</i>
<i>գրեալ ես</i>	<i>գրեալ էք</i>	<i>գրեալ էիր</i>	<i>գրեալ էիք</i>
<i>գրեալ է</i>	<i>գրեալ են</i>	<i>գրեալ էր</i>	<i>գրեալ էին</i>
<i>ստորադ. եղ. բաղադրյալ ապառնի</i>			
<i>գրեալ իցեմ</i>	<i>գրեալ իցեմք</i>		
<i>գրեալ իցես</i>	<i>գրեալ իցէք</i>		
<i>գրեալ իցէ</i>	<i>գրեալ իցեն</i>		

Ուսանողները պետք է տեղեկացված լինեն, որ գրաբարի վերլուծական ժամանակների կազմում անցյալ դերբայի հետ որպես օժանդակ բայ կարող են գործածվել նաև **եմ, լինիմ, կամ, ունիմ, երբեմն էլ՝ զոմ** բայերը՝ **կայր զարմացեալ, հրամայեալ լինէր, նկարեալ ունէր, գոյր ընդդիմացեալ**:

Շատ կարևոր է ուսանողների ուշադրությունը կենտրոնացնել անցյալ դերբայի հետ ենթակայի՝ ուղղական կամ սեռական հոլովով դրվելուն, ինչպես՝ **գրեալ է իմ, գրեալ եմ ես**²:

Անցյալ դերբայը կարող է հանդես գալ **ք** հոգնակերտով և թվով համաձայնել ենթակային՝ «Եւ որ մնացեալք իցեն՝ թուով լիցին» (Ագաթ., 342): «...որպէս զեղբայրս հարազատս անբաժին յղիացեալք էին միում ուրախութեան...իբրև զինու վառեալք էին» (Եղ., 198): «Որք աքսորեալք էին, և կեցեալք էին իւրաքանչիւր քաղաքս» (Բուզ., 172):

Վերլուծական ժամանակների կազմության ժամանակ անցյալ դերբայը երբեմն հոդ է ստանում՝ «Եւ այժմ տեսանես զՔրիստոս, առ որ անձկացեալն ես» (Ագաթ., 108):

¹ Շահվերդյան Թ., 2001, էջ 117-118: Մենք համակարծիք ենք Թ. Շահվերդյանի տեսակետին:

² Այտընեան Ա., 1886, 450: Աբրահամյան Ա., 1953, էջ 343:

«Կամ զհա՞րդ խօսիցիմ ի հաշտութիւն վաստ այնոցիկ, ոյք **փախուցեալն են**» (Բուզ., 66): «...որ **փառաւորեալդ ես** ի վերայ ամենայն տիեզերաց» (Բուզ., 302): «զոր **յանձան-ծեալսդ և սնուցեալսդ է**» (Ագաթ., 82): «Այլ դուք, որ այժմ յերեցունց աշխարհաց **եկեալդ էք** տանուտէրք և սեպուիք» (Փարպ., 118):

Քայլ III

Դասախոսության մեջ արծարծված խնդիրներն ավելի լավ ընկալելու և ամրապնդելու համար ուսանողներին տրվում են հարցեր՝ «Ինչպե՞ս է կազմվում անցյալ դերբայը», «Ի՞նչ ժամանակաձևեր է կազմում օժանդակ բայերի հետ», «Ի՞նչ իմաստներ են արտահայտում անցյալ դերբայով կազմված բաղադրյալ ժամանակաձևերը, հանձնարարվում են վարժություններ, ընդ որում բնագրային հատվածներ կարելի է վերցնել ոչ միայն դասական շրջանից (Բուզանդ, Կորիւն, Եղիշէ, Փարպեցի, Ագաթանգեղոս), այլև հին հայերենի ետդասական և նախամիջին շրջաններից (VI-XI դդ.), քանի որ մեր նպատակը անցյալ դերբայի ձևաիմաստային երկփեղկումը բացահայտելն է: VII-XI դարերում անցյալ դերբայի ուսումնասիրության համար նյութ կարելի է վերցնել Սեբեոսի «Պատմութիւն ի Հերակլն», Հովհ. Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ», Մ. Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի», Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան», Թ. Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» երկերը:

Վարժություն

Հին հայերենի մատենագրությունից քաղված օրինակների հիման վրա գտնել անցյալ դերբայով կազմված բաղադրյալ ժամանակաձևերը, դասակարգել դրանք, թարգմանել արդի արևելահայերեն, ուշադրություն դարձնել անցյալ դերբայի հետ ենթակայի՝ ուղղական կամ սեռական հոլովով դրվելուն:

«որ ոչ երբէք հեղգացել ենք յարքունի վաստակս» (Եղ., 19): « Մինչ չև ծնեալ էին, և մինչ չև մի ինչ բարի կամ չար գործեալ էին, ասէ» (Եզն., 134): «Ասէ ցմիւս անդամալոյծին թէ թողեալ լիցի քեզ մեղք քո» (Եզն., 64): «Եւ եկեալ էք ի վատի խնդիր և պատահէք չարի եւ կորնչիք» (Փարպ., 298): «Քանզի ամենայն անձն երկիւղի եւ կամաւ լսէր հրամանի նորա, իբրև թագաւորի, որ կարգեալ իցէ յԱստուծոյ ի վերայ երկրի» (- Փարպ., 364): «Եւ ասէր՝ եթէ զարմացեալ եմ ես զոր ինչ տեսի» (Ագաթ., 308): «Ի բազում պատերազմունս մտեալ է իմ» (Եղ., 100): «Նմանեալք լինէին այնմ հօտի խաշանց» (Բուզ., 54): «Իսկ եթէ դու ի տգիտութեան վրիպեալ ես, ես որ հաստատունս գիտեմ, ոչ կարեմ գալ զկնի քո մոլորութեանց» (Եղ., 72): «Եթէ յաջողեալ իցեն յահի քում և պահել իցեն ի մեծութեան եւ փափկանան ուրախութեամբ ի պակասելի կեանս» (Եղ., 111): «Զի գերծեալ էր ի բերանոյ առիծու և անկեալ ի բերան թշնամեաց» (Սեբ., 76): «- Յանդունդս ոք խորոց իցէ ընկուզեալ» (ԳՆ, 257): «Եթէ ի գաւառն Տարաւնոյ երկուս բազինս մնացեալ են» (ՀՄ, 79): «Այս է՝ զոր գահի հարեալ էի ի սկզբան պատմութեանս» (ՄԿ, 31): «Մինչ անցեալ է ըստ քանակութեան և վրիպեալ» (ԳՆ, 264): «Ոչ հայթայթմամբ խորտակեալ մարմնոյն» (ԳՆ, 297):

Բնագրային վկայությունները փաստում են, որ անցյալ դերբայը մինչև 10-րդ դար փոփոխության չի ենթարկվել:

II դաս:

Այս դասը ևս առաջարկում ենք անցկացնել **ԽԻԿ** մեթոդական համակարգով, գործածվող մեթոդներն են՝ **դասախոսություն, խմբային աշխատանք, վարժություններ:**

Դասի ընթացքը՝ **խթանման փուլ:**

Տանը հանձնարարված նյութի ստուգմամբ ամփոփում ենք գրաբարի անցյալ դեր-բայով կազմված բաղադրյալ ժամանակաձևերի քննությունը և անցնում նոր դասի բացատրմանը:

Երկրորդ դասի թեման է՝ «Անկախաբար գործածված անցյալ դերբայի՝ բայական իմաստով կիրառությունները հին հայերենում»:

Իմաստի ընկալման փուլ. Ընտրված մեթոդ՝ դասախոսություն (4-5 րոպե):

Գրաբարում անցյալ դերբայը գործածվում է առանց օժանդակ բայի և «ինքնին միայնակ վարի յաճախ փոխանակ դիմաւոր բայի»¹:

Գրատախտակին գրվում են օրինակներ՝ «Արարեալ զերկինս խորանարդ հաստահարկ, և զերկիր թանձրայատակ աղխեալ, սեղմեալ, և զերկինս կախեալ զոչնչէ, և զերկիրս ի վերայ ոչնչի կացուցեալ» (Ագաթ., 134):

Շարունակելով դասախոսությունը՝ նշում ենք, որ այս կառույցները դիմավոր նախադասության արժեք ունեն հետևյալ հիմնավորումներով.

ա) սրանց հետ ենթական գործածվում է ուղղական կամ սեռական հոլովներով,

բ) նրանք թարգմանվում են իբրև արդի հայերենի դիմավոր նախադասություններ,

գ) տվյալ խոսքային տիրություն նրանց դեմքն ու թիվը համարժեք են դառնում դիմային կառույցներին:

Իմաստի ընկալման փուլ: Հիմնավորման համար գրում ենք բնագրային օրինակներ՝ «...և զոյն մեռեալ և թաղեալ և ապա յարուցեալ և վերացեալ յերկինս» (Եղ., 27) (-Նույնը մեռավ, թաղվեց, հարություն առավ և երկինք վերացավ): «Որում և հասեալ ժամանեալ հայրաբարուն Գտայ...» (Կոր., 108) (Նրա մոտ եկավ հասավ հայրաբարո Գիտը): «Եւ փութանակի ժաղովեալ և առեալ զնացեալ զբազմութիւն քաջ» (Սեբ., 74): «Եւ նորա զայս լուեալ առեալ վեց հազար այր» (ՀՄ, 214):

Վերոբերյալ նախադասությունները փաստում են, որ անցյալ դերբայն անկախաբար ևս կարող է գործածվել դիմավոր բայի իմաստով: Շարունակելով անցյալ դերբայի՝ անկախաբար ուսուցումը՝ կառանձնացնենք որոշակի հետաքրքիր կառույցներ:

Անցյալ դերբայը բայական իմաստով կարող է թարգմանվել՝

ա) դիմավոր բայի իմաստով,

բ) այն դիմավոր բայի եղանակաժամանակային իմաստով, որին զուգահեռ գործածվում է,

գ) անորոշ դերբայի գործիական հոլովով:

Անցյալ դերբայի նշված գործառնությունն ամրապնդելու համար ուսանողներին տրվում է խմբային աշխատանք:

Առաջարկում ենք լսարանը բաժանել երեք խմբի:

Խումբ I- Հանձնարարվում է գտնել այն կառույցները, որտեղ անցյալ դերբայը թարգմանվում է անորոշ դերբայի գործիական հոլովով:

Խումբ II- Ուսանողներին հանձնարարվում է առանձնացնել այն նախադասությունները, որտեղ անցյալ դերբայը թարգմանվում է այն դիմավոր բայի եղանակաժամանակային իմաստով, որին զուգահեռ գործածվում է:

Խումբ III- Հանձնարարվում է գտնել այն նախադասությունները, որտեղ անցյալ

¹Բագրատունի Ա., 1852, 119:

դերբայը թարգմանվում է անորոշ դերբայի գործիական հոլովով:

Կարծություն

Այա ողջոյն տուեալք (տվեցին) զցանկալի ողջոյն միմեանց, անցեալ (անցան) ընդ կամուրջն Տափերայ, մտեալ (մտան) ի քաղաքն մեծ յԱրտաշատ» (Փարպ., 50): «Եւ տեսեալ (տեսավ) զնա Ջրուանայ, գիտաց եթէ Որմիզդ որդի նորա է» (Եզն., 114): «Ձի ոմն ընդունելի պատարագաւ արդար կոչեցեալ, եւ այլ ոմն ամենակուլ մահուանն կենօք երեւեալ (երևաց)» (Կոր., 84): «Ձայն իբրև լուաւ թագաւորն՝ յոյժ ցնծացեալ բերկրեցաւ (ցնծաց և ուրախացավ)» (Եղ., 48): «Ապա երթեալ հասանէր (գնում հասնում էր) ի գաւառին Բասենոյ ի մէջ մայրեացն» (Փարպ., 192): «Եւ ինքն յոյժ ցնծացեալ ուրախանայր (ցնծում և ուրախանում էր) ոչ այնչափ ընդ թագաւորութիւնն» (ՄԿ, 67): «Եւ անդէն չու արարեալ խաղայր զնայր հասանէր (ճանապարհվեց շարժվեց գնաց հասավ) յաշխարհն Պարսից» (Եղ., 128): «....իջուցեալ (իջեցնելով) ի փայտէն եղին ի գերեզմանի» (Ագաթ., 264): «....ամաչեցեալ կորանային (ամաչելով կորացնում էին) և ընդ երկիր պշնուին (Եղ., 84)»: «....և յետս ընդդէմ կործանեալ (կործանելով) փչեց զոգին ի ձեռս խրիդածովն իւրոյ սատանայի» (ԹԱ, 100):

Կշռադատման փուլ

Դասի կշռադատման փուլում համոզվելով, որ նոր նյութը բավարար չափով յուրացված է՝ փորձում ենք ամփոփել անցյալ դերբայի անկախաբար՝ բայական իմաստով գործառնությունները հին հայերենի մատենագրության մեջ: Այս փուլում դարձյալ կարևորում ենք լսարանի մասնակցությունը, տրվում են առանցքային հարցեր՝ «Անցյալ դերբայը կիրառվու՞մ է անկախաբար», «Ինչպե՞ս են թարգմանվում անկախաբար գործածված անցյալ դերբայով կառույցները», «Ինչպիսի՞ կառույցներ կարելի է առանձնացնել»:

Տանը հանձնարարվում է գրաբարի տարբեր դասագրքերից տեքստային թարգմանություններ կատարել՝ շեշտը դնելով անցյալ դերբայի՝ բայական իմաստով անկախ գործածություններին:

III դաս:

Առաջարկում ենք անցկացնել **ԽԻԿ** համակարգով՝ գործնական աշխատանքների, գրույցի, գծապատկերի կիրառմամբ:

Երրորդ դասի թեման է՝ «Անցյալ դերբայի անվանական գործառնությունները հին հայերենում»

Դասի ընթացքը՝ **խթանման փուլ**.

- հակիրճ անդրադառնալ անցյալ դերբայ+օժանդակ բայերով կազմված կաղապարների կրկնությանը,

- անկախաբար՝ բայական իմաստով կիրառություններին,
- ստուգել տնային առաջադրանքները:

Իմաստի ընկալման փուլ. ընտրված մեթոդ՝ **գործնական աշխատանքներ**:

Ուսանողներին հիշեցվում է, որ գրաբարում անցյալ դերբայը հոլովվում է՝ ենթարկվելով անվանական **ո** հոլովման, որից հետո ուսանողներից մեկին հանձնարարվում է գրատախտակին գրել հոլովման հարացույցը:

Եզակի թիվ

Հոգնակի թիվ

Ուղղ. մնացեալ

մնացեալք

Հ. (զ) մնացեալ

(զ) մնացեալս

Ս. մնացելոյ

մնացելոց

Տ. մնացելոյ

մնացելոց

Բ. ի մնացելոյ

ի մնացելոց

Գ. մնացելով

մնացելովք

Ն. ի մնացեալ

ի մնացեալս

Այս ամենից հետո պարզ է դառնում, որ անցյալ դերբայը նախադասության մեջ կարող է հանդես գալ շարահյուսական այն բոլոր պաշտոններով, որոնք բնորոշ են գոյականին և ածականին, և դրանք ոչ թե փոխանվանական գործածություններ են, այլ՝ գրաբարի անցյալ դերբային բնորոշ գործառնություններ: Անցյալ դերբայը կարող է գործածվել գոյականի, ածականի, մակբայի ձևաբանաշարահյուսական արժեքներով:

Իմաստի ընկալման փուլ:

Ստորև առաջարկում ենք բնագրային օրինակներ շարահյուսական վերլուծությունների համար (որոշել անցյալ դերբայի շարահյուսական պաշտոնները):

Վարժություն

«Եւ ասացեալքն ի թագաւորէն կատարէին առ վաղիւն» (Փարպ., 108): «Եւ գովելիք են, որպէս իմաստասիրեցեալքն» (Խոր., 10): «....մի ընկղմեսցի նաւ հաւատոց մերոց ի մէջ ալեկոծեալ ծովու մեղաց» (Եղ., 306): «Եւ յետ այսորիկ էառ իւր զկինն սպանելոյն զՓառնանծեմն» (Բուզ., 192): «Եւ ամենայն ժողովրդոց աշխարհիս Հայոց՝ ձեզ նեղելոց և վշտակցելոցդ, գանալից դեղելոց և խրատելոցդ, յանձանծելոց զգուելոց սփոփելոցդ և սիրեցելոցդ ի Հաւրէն երանաւորէ» (Սեբ., 118): «Իսկ Արշակ թագաւորն սիրով ունէր և սիրով լսէր պատգամին և հաւանէր զասացելոցն» (Բուզ., 200): «....գոր առաքելովքն քարոզեցեր քոց ստացուածոց յաշխարհի» (Բուզ., 270): «....մարգպանն պարսիկ որ երթայ յաշխարհն՝ կնաւ երթայ և որդւովք, դրամք և սիրելովք, ծառայիւք և աղախնեօք» (Փարպ., 430): «Իսկ Տէրն, ըստ ասացելոյն իւրոյ, յարուցեալ յաւուրն երրորդի» (Ագաթ., 264): «Եւ ի բազում յայլ տեղիս գողաբար սողացաւ և եմուտ իբրև զօծ ի մէջ ամրացելոցն» (Եղ., 184): «Ի կիր արկանէ այնուհետև նշանակել միանգամայն զփորձութիւնս ի վերայ յարձակեալս» (Կոր., 84):

Այս ամենն ամփոփելուց հետո ուսանողներին կարելի է տեղեկություն տալ անցյալ դերբայի ոճական առանձնահատկությունների մասին V-XI դարերի մատենագրության շրջանակներում:

Ստորև ներկայացվող վարժություններում կարելի է ցույց տալ անցյալ դերբայի ոճական կիրառությունները.

ա) անցյալ դերբայը որպէս բայական ավելադրություն.

Հին հայերենի մատենագրության մեջ հետաքրքիր ոճական առանձնահատկություն են դրսևորում անցյալ դերբայով կազմված բայական ավելադրությունները: Ավելադրությունը քերականական տվյալ ձևի մոտ համանիշ որևէ բառի գործածությունն է՝

իմաստի սաստկացման կամ ոճին զարդարանք տալու նպատակով¹:

Երբ միևնույն բայն է կրկնվում՝ «....և **եկեալ եկաց** առաջի ոսոխ վիրագիր» (ԹԱ, 216): «....**անցուցեալ զանցուցեալ** զսատակչական կործանմանն ջրհեղեղին» (ԹԱ, 336):

Երբ անցյալ դերբայը և նրան հաջորդող դիմավոր բայը հոմանիշներ են կամ նույնանիշներ, ինչպես՝ «Եւ սուրբ տեղեօքն **քամահեալ արհամարիէր**» (Բուգ., 180): «....և **մեկնեալ գնացին** իւրաքանչիւր ի տեղիս» (Սեբ., 98): «....և փորձ լուսափայլ՝ յամենայն ազգս ընդունողաց **սփռեալ տարածեցաւ** բանն» (Փապ., 76): «Եւ իշխանքն **երթեալ գնացին** մինչև ի դուռն քաղաքին» (ՀՄ, 113):

բ) անցյալ դերբայներով հոմանշային շարքը՝ իմաստի սաստկացման դերով.

Պատմիչները հաճախ միևնույն նախադասության մեջ գործածում են հոմանիշ բառազույգեր կամ հոմանշային շարքեր, որի նպատակը ասելիքի բովանդակության սաստկացումն է՝ հաղորդած միտքն առավել տպավորիչ դարձնելու համար:


Դիտարկենք հետևյալ նախադասությունները.

«Իսկ իբրև ետես զայս եղբայրն թերահաւատ կրօնաւոր, **զարհուրեալ դողացեալ խռովեալ տազնապեալ** յերկիր կործանեալ կայր, ի բերանս **հարեալ, պարտեալ թալացեալ** ոգին **սպառեալ** յինքենէ» (Բուգ., 344):

«Իսկ հանդերձիկն որ զնոքօք արկեալ՝ այն ցեցակեր **մեցոտեալ փխրեալ եղծնեալ մաշեալ կորուսեալ** ապականին» (Ագաթ., 288):

Լսարանի օգնությամբ ամփոփվում է անցյալ դերբայի իմաստային, ձևաբանական, ոճական-շարահյուսական քննությունը հին հայերենում:

Այս դերբայի զարգացումը հինհայերենյան շրջանում կարող ենք ներկայացնել գծապատկերով.



¹Խաչատրյան Լ., Թոսունյան Գ., 2004, էջ 317:

Եզրակացություն

Ուսուցանելով հին հայերենի անցյալ դերբայի ձևաիմաստային դրսևորումները՝ պարզեցինք նշյալ դերբայի բազմիմաստությունը:

Մեր կողմից առաջարկված երեք դասաժամերի ընթացքում ներկայացրինք անցյալ դերբային՝ իբրև ձևաբայի և դերբայի բնորոշ հատկանիշները:

- Ձևաբանական մակարդակում անցյալ դերբայն օժանդակ բայերի հետ (կախյալ գործառնություն) կազմում է բաղադրյալ ժամանակածևեր:

- Շարահյուսական մակարդակում անկախաբար կիրառվելիս անցյալ դերբայը գործածվում է և՛ բայական, և՛ անվանական գործառնություններով՝ դրսևորելով հետաքրքիր ոճական առանձնահատկություններ:

Վերոնշյալ բոլոր կառույցներն ուսանողների մեջ ամրապնդեցինք հին հայերենի մատենագրության փաստերի հիման վրա:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագաթ.-Ագաթանգեղայ Պատմություն Հայոց, Երևան, 1983:

Բուզ.-Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1987:

ԳՆ -Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Երևան, 1985:

Եզն. -Եզնկայ Վարդապետի Կողբացւոյ Եղծ աղանդոց, Երևան, 1994:

Եղ.- Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:

ԹԱ.- Թովմա Արծրունի և անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917:

Խոր.- Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1981:

Կոր.-Կորին, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:

ՀՄ -Մամիկոնեան Յովհ., Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941:

ՄԿ.- Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912:

Սեբ.- Պատմութիւն Սեբէոսի, Երևան, 1979:

Փարպ.- Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1982:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Աշխարհաբարի քերականութիւն, Վաղարշապատ, 1906:
2. Աբեղյան Մ., Երկեր, հ. Զ, Երևան, 1974:
3. Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1952:
4. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, Մաս I, Երևան, 1940:
5. Այտընեան Ա., Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866:
6. Ավետիսյան Հ., Ռ. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1992:
7. Բագրատունի Ա., Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:
8. Գյուլբուդայան Ս., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1978:
9. Խաչատրյան Լ., Թոսունյան Գ., Գրաբարի դասագիրք, Երևան., 2004:
10. Ղազարյան Ս., Հայոց գրական լեզվի պատմություն, հ. Ա, Երևան, 1961:

11. Ղարազուլյան Թ., Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը, Երևան, 1961:
12. Մալխասյանց Ս., Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, Թիֆլիս, 1891:
13. Յուզբաշյան Աշխ., Գրաբարի շարահյուսական ուսուցման մի քանի հարցեր, Երևան, 2014:
14. Շահվերդյան Թ., Գրաբարի դերբայները. ձևաբանություն և շարահյուսություն, Երևան, 2001:
15. Զահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964:
16. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Կրթության ազգային ինստիտուտ, Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր, 2008:
17. Патканов К., Исследование о составе армянского языка, СПб, 1864.
18. Томсон А., Историческая грамматика современного армянского языка города Тифлиса, СПб, 1890.

REFERENCES

1. Abeghyan M., Ashkharhabari k'erakanut'iwn [Universal Grammar, Vagharshapat, 1906], (in Armenian).
2. Abeghyan M., Yerker, h. Z [Yerker, vol. Z, Yerevan, 1974], (in Armenian).
3. Abrahamyan A., Hayereni derbaynery yev nrants' dzevabanakan nshanakut'yuny [Armenian derbais and their morphological significance, Yerevan, 1952], (in Armenian).
4. Acharryan H., Hayots' lezvi patmut'yun, Mas I [History of the Armenian language, Part I, Yerevan, 1940], (in Armenian).
5. Aytynyan A., K'nnakan k'erakanut'iwn ardi hayeren lezui [Examining grammar of the modern Armenian language, Vienna, 1866], (in Armenian).
6. Avetisyan H., R. Ghazaryan, Grabari dzernark [Grabari handbook, Yerevan, 1992], (in Armenian).
7. Bagratuni A., Hayeren k'erakanut'iwn i pets zargats'elots' [Armenian Grammar in State Development, Venice, 1852], (in Armenian).
8. Gyulbudaghyan S., Hayots' lezvi met'vodika [Methodology of the Armenian language, Yerevan, 1978], (in Armenian).
9. Ghazaryan S., Hayots' grakan lezvi patmut'yun [History of the Armenian Literary Language, no. A, Yerevan, 1961], (in Armenian).
10. Khach'atryan L., T'vosunyan G., Grabari dasagirk' [Grabari textbook, Yerevan., 2004], (in Armenian).
11. Gharagulyan T'., Hin hayereni khonarhman hamakargi tsagumy [The origin of the ancient Armenian conjugation system, Yerevan, 1961], (in Armenian).
12. Malkhasyants' S., Grabari holovumy, khonarhumy yev nakhdirnery [Conjugation, Conjugation and Prepositions of Grabar, Tiflis, 1891], (in Armenian).
13. Yuzbashyan Ash., Grabari sharahyusakan usuts'man mi k'ani harts'er [Some issues of Grabar syntactic learning, Yerevan, 2014], (in Armenian).

14. Shahverdyan T., Grabari derbaynery. dzevabanut'yun yev sharahyusut'yun [Derbayner of Grabar. morphology and syntax, Yerevan, 2001], (in Armenian).
15. Jahukyan G., Hayots' lezvi zargats'man p'ulery [Stages of development of the Armenian language, Yerevan, 1964], (in Armenian).
16. Usuts'man zhamanakakits' met'vodner, hnarnar, varzhut'yunner, Krt'ut'yan azgayin institut, Lorru masnachyugh [Modern teaching methods, techniques, exercises, National Institute of Education, Lori branch, c. Vanadzor, 2008], (in Armenian).
17. Patkanov K., Izsledovanie o sostave armânskogo âzyka [Research on the composition of the Armenian language, SPB, 1864], (in Russian).
18. Tomson A., Istoričeskââ grammatika sovremennogo armânskogo âzyka [Historical grammar of the modern Armenian language of the city of Tiflusa, SPB, 1890], (in Russian).

РЕЗЮМЕ

Изучение морфолого-семантических особенностей

Причастия прошедшего времени в грабаре (древнеармянском языке) в курсе «История армянского языка»

Нарине Маркосян

*Ассистент кафедры истории армянского языка ЕГУ,
кандидат филологических наук
Ереван, республика Армения*

В данной статье, используя различные интерактивные методы, мы обращаемся к рассмотрению и оценке причастия прошедшего времени в грабаре (древнеармянском языке) как наречия и причастия в контексте развития языка. Вопрос исследуется на материале оригинальных древнеармянских текстов. Изучение парадигмы причастия прошедшего времени важно и необходимо, поскольку в ней представлены изменения, происходящие на стыке самостоятельных и зависимых причастий в ходе исторического развития языка, а также этим завершается описание формирования и развития конструкций, составляющих основную часть главных и отчасти второстепенных составных временных форм в глагольной системе армянского языка.

В работе предложено 3 урока с использованием традиционных и новых методов (беседа, лекция, мозговой штурм, вопросы, групповая и практическая работа, схема), в ходе которых мы пытаемся объяснить принцип состава причастия прошедшего времени, изучить типы конструкций с причастием прошедшего времени и вспомогательными глаголами, показать морфолого-семантическое расщепление такого причастия, имеющее различные проявления в языке.

На уроках показаны особенности выражения подлежащего в именительном или родительном падеже с причастием прошедшего времени, затронуты также вопросы использования самостоятельного причастия прошедшего времени в глагольной и именной функциях.

Ключевые слова: древнеармянский язык, причастие прошедшего времени, зависимое причастие, самостоятельное причастие, наречие, изучение глагольной и именной функций, интерактивные методы.

SUMMARY

**Teaching of Morpho-semantic Peculiarities of Old Armenian Past Participle in the Course
“The History of the Armenian Language”**

Markosian Narine

*YSU, Department of History of the Armenian Language,
Assistant, Candidate of Philology
Yerevan, Armenia*

Within the frames of the article we dwell on the use of various interactive methods in regard to the Old Armenian Past Participle both as a verb form and a participle. We study and evaluate the Old Armenian Past Participle as a verb form and a participle from the perspective of the development that Old Armenian underwent over its existence. We teach the topic under discussion, using primary Old Armenian materials. The synchronous teaching of Past Participle is both crucial and necessary, since it represents the changes that dependent and independent participles have undergone throughout the historical development of the Armenian language. The instruction also demarcates and completes the principal and partly secondary compound tense forms of the Armenian verb system, introducing the formation and development of structures that make up the core of it.

Our study proposes three periods during which, using both conventional and novel methods (conversation, lecture, brainstorming, questions, practical group work, diagram,) we try to explain the principle on which the Past Participle is formed, teach the types of finite tense form structures with Past Participle and auxiliary verbs, we also highlight the morpho-semantic binary split of the Past Participle into Perfective Converb and Resultative Participle which due to the clarification of their linguistic uses have already distinct manifestations.

During the classes we are to show how the Past Participle is used with the subject in the Nominative or Genitive Case we are also to study the verbal and nominal functions of Past Participle used independently.

Key words. Old Armenian, Past Participle, dependent Participle, independent Participle, verb form, teaching verbal and nominal functions, interactive functions.